

**Տեղեկանք . Canada Child Benefit**

**Canada Child Benefit-ը (CCB)** 18 տարեկանից ցածր տարիքի երեխանունեցող իրավունակ ընտանիքներին վճարվող ամենամսյա չհարկվող գումար է, որի նպատակն է օգնել հոգալ այդ երեխաների կարիքները:

2016 թ. հունիսի դրությամբ, **CCB** փոխարինել է **Canada Child Tax Benefit-ին (CCTB)**, **National Child Benefit Supplement-ին (NCBS)** և **Universal Child Care Benefit-ին (UCCB)**: Եթե Դուք մինչ այդ **CCTB** կամ **UCCB** էիք ստանում, ապա **CCB**-ի դիմում ներկայացնելու կարիք չունեք: Այն ինքնաբերաբար ուժի մեջ կմտնի:

**Իրավունակության համար անհրաժեշտ է բավարարել հետևյալ բոլոր պայմանները.**

- Անհրաժեշտ է, որ բնակվեք երեխայի հետ, և երեխայի տարիքը լինի 18 տարեկանից ցածր;
- Անհրաժեշտ է, որ լինեք երեխայի խնամքի և դաստիարակության համար հիմնական պատասխանատու անձը: Հիմնական խնամքի սահմանումները մասին հավելյալ տեղեկատվության համար տե՛ս **Canada Revenue Agency (CRA) [գրքույկը](#)**;
- Անհրաժեշտ է, որ լինեք Կանադայի բնակիչ;
- Անհրաժեշտ է, որ Դուք կամ Ձեր ամուսինը/կինը կամ հանրային օրենսդրվող գույքը կերպով լինեք Կանադայի քաղաքացի, մշտական բնակիչ, պաշտպանված անձ, կամ անցած 18 ամիսներին Կանադայում բնակված ժամանակավոր բնակիչ:

**Դիմելու համար .**

Անհրաժեշտ է լրացնել **Ձև RC66-ը` Canada Child Benefits Application**:

Վերջերս վերաբնակեցված փախստականները պետք է նաև լրացնեն **RC66SCH** **Դանդակը` Status in Canada/Statement of Income**:

\*Եթե երեխան մեկ տարեկանից ավելի մեծ է և Կանադայում չի ծնվել, ապա պետք է նաև ներկայացնեք երեխայի ծննդյան ապացույց: Ընդունելի փաստաթղթերի մասին մանրամասները համար տե՛ս **Ձև RC66**-ի Մաս 4-ը:

Այս ձևերը լրացնելուց հետո դիմումն ուղարկեք **Ձեր տարածքը** սպասարկող հարկային կենտրոն: Կենտրոններին ու հասցեներին ցանկը կարելի է գտնել [www.cra-arc.gc.ca/bnfts/ddrss-eng.html](http://www.cra-arc.gc.ca/bnfts/ddrss-eng.html) կայքում:

Իբրև այլընտրանք, եթե նախորդ հարկային տարում բնակվել էք Կանադայում, ապա դիմումը կարող եք ներկայացնել էլեկտրոնային տարբերակով, **CCB**-ի կայքից` [www.cra-arc.gc.ca/myaccount/index.html](http://www.cra-arc.gc.ca/myaccount/index.html):

Խնդրում ենք նկատի ունենալ հետևյալը. Դիմումը լրացնելու համար եկամտահարկի գնահատումներ չեն պահանջվում: Ընտանիքի եկամուտը կգնահատվի **RC66SCH**-ի միջոցով: Այսուհանդերձ, նպաստները շարունակաբար ստանալու համար անհրաժեշտ է, որ անհատները ներկայացնեն բոլոր հետագա հարկային հայտարարագրերը` հաշվակման նպատակով: Ժամանակն ց հետո ամեն տարի անհրաժեշտ է հայտարարագրի ներկայացնել, որպեսզի **CCB** նպաստները շարունակվեն:

## Դիմումներն ընթացք տալու ժամկետը

Այն կալվաճում է, որ դիմումը ստանալուց ոչ ավելի քան 80 օրացուցային օրվա ընթացքում **CRA**-ը դիմումի հարցով կկապվի դիմորդի հետ: Եթե 80 օրվա ընթացքում դիմումի ստացումը հաստատող ծանուցում չեք ստացել, ապա զանգահարեք **CCB** և հարցում ներկայացրեք: Դիմումը մշակելուց հետո **CCB**-ն փոստով Ծանուցագիր կուղարկի նշելով ստանալիք նպաստներին գումարը: **CCB** վճարումները ներառում են նահանգային և տարածքային ծրագրեր և առավելում են փոստով, կամ ուղիղ բանկային փոխանցումով, յուրաքանչյուր ամիս: Առաջին չեք ստանալու համար սովորաբար եռամսյա սպասաշրջան է սահմանված: Մամիանվագ գումար կլինի անցած բոլոր ամիսներին նախատեսված այն նպաստներին համար, որոնց կապակցությամբ տվյալ անձնուները իրավունակություն: **CRA**-ը, սակայն, հետին թվով վճարումներ կարող է կատարել միայն դիմումը ստանալու նախորդող առավելագույնը 11 ամսվա համար, ուստի կարևոր է, որ դիմումը ներկայացվի հնարավորինս արագ:

## Կարևոր նկատարում **Joint Assistance Sponsorship-ի (JAS)** գործերի վերաբերյալ

Սպասաշրջանի ընթացքում ընտանիքներին հասանելիք նպաստի գումարը **Resettlement Assistance Program-ի (RAP)** կողմից կավելացվի նրանց ամենամսյա չեքերին: Այսուհանդերձ, իր առաջին **CCB** չեքը ստանալու նպես, որը կներառի ընտանիքի ժամանումից ի վեր ընկած ժամանակահատվածի համար հասանելիք միանվագ գումարը, ընտանիքը պետք է **RAP**-ին վերադարձնի անցած երեք ամսվա համար իր ստացած **CCB**-ի գումարը: Կարևոր է այս մասին նորեկներին տեղեկացնել, որ պեսզի նրանք կարողանան պատշաճ բյուջե տավորում կատարել:

## Նահանգային նպաստներ

**CRA**-ի վարչակազմի իրավասություններ ներառում է **Alberta Family Employment Tax Credit**-ը, **BC Family Bonus**-ը, **New Brunswick Child Tax Benefit**-ը, **Newfoundland and Labrador Child Benefit**-ը, **Northwest Territories Child Benefit**-ը, **Nova Scotia Child Benefit**-ը, **Nunavut Child Benefit**-ը, **Ontario Child Benefit**-ը և **Yukon Child Benefit**-ը: Այս ծրագրերին որակավորվելու համար առանձին դիմումներ ներկայացնելու կարիք չկա: Այս ծրագրերից օգտվելու իրավունակությունը **CRA**-ը կորոշի ելնելով **CCB**-ի դիմումում ներկայացված տեղեկատվությունից:

## Այլ արտոնություններ

Երեխայի խնամքի ծախսերի չհարկում .

Մասնավոր կարգով հովանավորված փախստականները (**PSR-ներ**) կարող են դիմել այս նպատակով՝ այնքան ժամանակ, քանի դեռ երեխան միայն մեկ խնամատար անձնու է: Երեխայի խնամքի ծախսերն այն գումարներն են, որոնք վճարվում են մեկ այլ կողմի, իրավունակ երեխային հետևելու նպատակով, որ պեսզի անձը կարողանա .

- Աշխատանքի միջոցով եկամուտ վաստակել;
- Գործարար գործունեություն ծավալել միայնակ, կամ իբրևակ տիվ գործընկեր;
- Դպրոց հաճախել (պայմանները թվարկված են «կրթական ծրագրերի» ներքո);

- Իր ակնանցները հետագոտական կամ նմանատիպ աշխատանք, որի համար դրամաշնորհ է տրամադրվել:

Երեխայի խնամքի ծախսերի դիմաց վճարումները պետք է կատարվեն.

- Երեխայի խնամքի ծառայություններ մատուցող խնամատուներին;
- Ցերեկային մանկապարտեզներին ու մանկական խնամքի ցերեկային կենտրոններին;
- Կրթական հաստատություններին՝ վարձի այն մասի համար, որը վերաբերում է երեխայի խնամքի ծառայություններին;
- Ցերեկային ճամբարներին ու ցերեկային մարզադպրոցներին, որտեղ ճամբարի հիմնական նպատակը երեխաներին խնամքի տրամադրումն է (մարզական ուսուցման ծրագիր տրամադրող հաստատությունը մարզադպրոց չի համարվում); կամ
- Գիշերօթիկ դպրոցներին, գիշերօթիկ մարզադպրոցներին, կամ ճամբարներին, որտեղ գիշերելու հնարավորություն կա:

**Goods and Services Tax/Harmonized Sales Tax (GST/HST) հարկային վերադարձ .**

**GST/HST** հարկային վերադարձը չհարկվող եռամսյակային վճարում է, որի օգնությամբ ցածր և համեստ եկամուտ ունեցող անհատներն ու ընտանիքները մասամբ կամ ամբողջությամբ փոխհատուցվում են իրենց վճարած **GST**-ի կամ **HST**-ի համար:

**GST/HST** հարկային վերադարձի մասին հավելյալ տեղեկատվություն համար խնդրում ենք այցելել [www.cra-arc.gc.ca/bnfts/gsthst/menu-eng.html](http://www.cra-arc.gc.ca/bnfts/gsthst/menu-eng.html):

**Հարկային կենտրոններ**

**Winnipeg Tax Centre**  
PO Box 14005 Stn Main  
Winnipeg, MB, R3C 0E3

Պատասխանատվությունները . Alberta, Manitoba, London-Thunder-Bay-Windsor (ON), Saskatoon (SK)

**Surrey Tax Centre**  
9755 King George Highway  
Surrey, BC, V3T 5E1

Պատասխանատվությունները . British Columbia, Regina (SK), Yukon

**St. John's Tax Centre**  
PO Box 12071 Stn A  
St. John's, NL, A1B 3Z1

Պատասխանատվությունները . New-Brunswick, Newfoundland and Labrador, Nova-Scotia, Kingston-Peterborough-St-Catherine's (ON)

**Shawinigan-Sud Tax Centre**  
PO Box 3000 Stn Main  
Shawinigan-Sud, QC, G9N 7S6

Պատասխանատվությունները . Nunavut, Ottawa-Sudbury (depending on postal code) (ON)

**Sudbury Tax Centre**  
PO Box 20000 Stn A  
Sudbury, ON, P3A 5C1

Պատասխանատվությունները . Barrie-Sudbury (depending on postal code)-Toronto (ON)

**Summerside Tax Centre**  
102-275 Pope Road  
Summerside, PE, C1N 5Z7

Պատասխանատվությունները . Belleville-Hamilton-Kitchener/Waterloo (ON), Prince-Edward Island

**Refugee Sponsorship Training Program**

Հեռ. . 416.290.1700, 1.877.290.1701

Ֆաքս . 416.290.1710

Էլ . փոստ . [info@rstp.ca](mailto:info@rstp.ca), կայք . [www.rstp.ca](http://www.rstp.ca)

Վերջին թարմացումը . 2016 թ. դեկտեմբերին